ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 5-Լ

«09» 01 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀՍՏԱԿԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ՝ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի Ն 16 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2024 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած քննչական ենթակայության կանոնների պայմաններում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված գործառույթները հստակեցնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանց արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 4-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործառույթները օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել՝

1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք) 9-րդ (18.04.2003թ. ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգիրք) 7-րդ) բաժնով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 297-299-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 258, 261, 262-րդ) և 508-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 353.1-ին) հոդվածներով նախատեսված հանցագործություններով՝ բացառությամբ այն քրեական վարույթների, որոնցով նախաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում.

2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 43-րդ գլխի (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 29-րդ գլխի) հոդվածներով, 44-րդ գլխի 452-460-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 30-րդ գլխի 316-319, 321-326-րդ) հոդվածներով, 45-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 31-րդ) գլխի հոդվածներով նախատեսված հանցագործություններով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 508-րդ հոդվածով նախատեսված հանցագործության)՝ բացառությամբ այն քրեական վարույթների, որոնցով նախաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում.

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 32-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 22-րդ) գլխի հոդվածներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 340-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 235[1]-րդ) հոդվածով նախատեսված հանցագործություններով՝ բացառությամբ այն քրեական վարույթների, որոնցով նախաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում.

4) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 30-րդ և 31-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 21-րդ) գլուխների հոդվածներով նախատեսված հանցագործություններով՝ բացառությամբ այն քրեական վարույթների, որոնցով նախաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում.

5) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 8-րդ, 11-րդ և 12-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 9-րդ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 258-րդ, 261-րդ, 262-րդ հոդվածներով և 26-րդ գլխով), 10-րդ և 13-րդ) բաժինների հոդվածներով նախատեսված հանցագործություններով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 297-299[1]-րդ, 340-րդ հոդվածներով), 42-րդ գլխի (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 299-303-րդ, 306-307.4-րդ) հոդվածներով, 43-րդ գլխի 451-րդ հոդվածով, 44-րդ գլխի 469-472-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 329-331-րդ) հոդվածներով նախատեսված հանցագործություններով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախաքննությունն իրականացվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կամ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումների կողմից.

6) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 13-րդ բաժնի (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 26-րդ գլխի) հոդվածներով

նախատեսված հանցագործություններով՝ բացառությամբ այն քրեական վարույթների, որոնցով նախաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում.

7) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից՝ բոլոր հանցագործություններով, որոնցով մինչդատական վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեում:

2. Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով և 12-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից:

3. Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով և 12-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության կողմից:

4. Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 12-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության կողմից:

5. Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 12-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության կողմից:

6. Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 12-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից:

7. ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր հատուկ հանձնարարություններով վարչության կողմից իրականացնել հետևյալ գործառույթները՝

7.1) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից հանձնարարված հասարակական հետաքրքրություն ունեցող, բարդ և բազմադրվագ քրեական վարույթներով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն, ինչպես նաև մեղադրանքի պաշտպանություն և դրանով պայմանավորված՝ դատական ակտերի բողոքարկում.

7.2) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության, ինչպես նաև ոստիկանության շտաբի տեսչական վարչության մոնիթորինգի, մեթոդական օգնության և տեսչական ստուգումների բաժինների կողմից՝ կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների կատարման վիճակի ստուգում.

7.3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի այլ հատուկ հանձնարարությունների և առաջադրանքների կատարում:

8. Սույն հրամանի 1-ին կետի 1-6-րդ ենթակետերով նախատեսված

վարչություններին՝ օրենքով և սույն հրամանով նախատեսված անմիջական դատախազական հսկողության ու դատավարական ղեկավարման գործառույթներն իրականացնել այն բոլոր հանցագործություններով, որոնցով մինչդատական քրեական վարույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի ստորաբաժանումներում:

9. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տարբեր վարչությունների իրավասությանը վերապահված հանցագործությունների համակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներով Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնել այն վարչության կողմից, որի իրավասությանը վերապահված է առավել ծանր հանցագործություններով համապատասխան լիազորությունների իրականացումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-325-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 223.1-223.4-րդ) հոդվածներով նախատեսված հանցագործությունների հետ համակցությամբ դեպքերի, որոնց նկատմամբ համապատասխան լիազորություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից: Ծանրության հավասար աստիճան ունեցող հանցագործությունների դեպքում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնել սույն հրամանի 1-ին կետում նշված հերթականությամբ սահմանված վարչության կողմից:

Եթե հանցագործությունների համակցությունը ներառում է սպանության (բոլոր տեսակների), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-325-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 223.1-223.4-րդ) հոդվածներով նախատեսված հանցագործությունների դեպքեր, ապա Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից:

Եթե հանցագործությունների համակցությունը ներառում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 190-րդ) հոդվածով նախատեսված հանցագործության դեպք՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության այն կառուցվածքային ստորաբաժանման կողմից, որը մինչև 2024 թվականի հունվարի 1-ը նշված գործերով (վարույթներով) իրականացրել է հսկողական կամ վերահսկողական գործառույթներ՝ բացառությամբ այն գործերի (վարույթների), որոնք հանձնվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին:

Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է ստեղծել դատախազների խումբ, որում կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության տարբեր վարչությունների դատախազներ:

Սույն հոդվածի իմաստով առավել ծանր հանցագործություն է համարվում այն հանցագործությունը, որի սանկցիայով նախատեսված է առավել խիստ պատժատեսակ, իսկ նույն խստության պատժատեսակի դեպքում՝ հիմք է ընդունվում պատժի վերին շեմը:

10. Քրեական վարույթով նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքը փոփոխվելու կամ այլ հանցանքի կապակցությամբ քրեական հետապնդում հարուցվելու

դեպքում՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթների իրականացումը շարունակել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդում է հարուցվում ավելի ծանր հանցանքի կամ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-325-րդ (Հայաստանի Հանրապետության նախկին քրեական օրենսգրքի 223.1-223.4-րդ) հոդվածներով նախատեսված հանցագործությունների կապակցությամբ, որոնց դեպքում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնել սույն հրամանի 1-ին կետով սահմանված կարգով: Եթե քրեական վարույթի նյութերով նախաձեռնվում է նոր քրեական վարույթ և վարույթները միացվում են մեկ վարույթում, ապա Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնել սույն հրամանի 8-րդ կետի դրույթներին համապատասխան, իսկ եթե վարույթները չեն միացվում կամ քրեական վարույթից մաս է անջատվում՝ սույն հրամանով սահմանված ընդհանուր կարգին համապատասխան:

11. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քրեական վարույթը Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտե կամ քննչական կոմիտե փոխանցվելու դեպքում Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ նախատեսված գործառույթներն իրականացնել սույն հրամանի 1-ին կետով սահմանված կարգով:

12. Սույն հրամանով սահմանված կարգավորումները չեն գործում, եթե օրենքով կամ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններով, իսկ բացառիկ դեպքերում՝ կոնկրետ դեպքով, հանձնարարությամբ այլ բան է նախատեսված:

13. Սույն հրամանով չկարգավորված դեպքերում դատախազական գործառույթների իրականացման կարգը որոշում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

14. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններով և հանձնարարականներով, Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի որոշումներով սահմանված հանձնարարությունները կատարել սույն հրամանով նախատեսված գործառույթների բաշխմանը համապատասխան:

15. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված գործառույթները հստակեցնելու և Հայաստանի հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հուլիսի 1-ի N 48 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2023 թվականի մարտի 13-ի N 16 հրամանը:

16. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ գործունեությունը դադարած հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության հսկողական և վերահսկողական գործառույթները և համապատասխան հսկողական վարույթները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հանրակական անվտանգության

դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությանը:

17. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ նրանց հանձնարարված ոլորտների:

18. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. Կ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**